

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՎԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՅԱՄԹ

Rev. Pere G. Kalémkarian Mechitaristengase
M 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (Երկու փուլով ձևով)
Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկեղ հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլիարիա)

Редакция на вѣст.

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARA (Bulgarie)

Խմբագրութեան յաղակ գրութիւնք
էս լին յրկուր եւ յարմար դասուած
ներք միայն կը հրատարակուին աւ-
րոյնքի կամ մասաւր.
Խմբագրութեան տղր 20 սանթիմ. երե-
փեկ աւելի ակաւմներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՒ

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՍ ՀԵՑԷՆ ԿԸ ԳՐԵՆ ՄԵՁ ԹԷ

Տ. Մինաս Չերազ հոն հասեր է
մայիս 17ին. Համեղէն անմիջապէս
յետոյ, ներկայ գտնուել է անգ-
լիական և ամերիկեան գաղթա-
կանութեանց ի նպաստ խաղաղու-
թեան կատարուած գումարման, և
անգլիերէն բանախօսելով յայտա-
բարեր է թէ խաղաղութեան վե-
հաժողովը գրեթէ ապարդիւն պի-
տի լինի եթէ արգար լուծում մը
չը գտնէ Ալգաս-Լուէնի և Հայաս-
տան-Մակեդոնիայի խնդիրներուն
համար, յայտարարութիւն որ հա-
ւանութեան ցոյցերով ընդունուել է
ներկայից կողմէ: Յաջորդ օրը ի-
մանալով որ վեհաժողովի անգամ
ներէն և յատուկ քարտ ստացած
սովակաթիւ անձերէ զատ ոչ ոք
պիտի արտօնուի վեհաժողովին
յատկացած պալատը մտնել և
խնդրագիր տալ, նիստին բացու-
մէն մէկ ժամ առաջ յաղորդել է հոն
թափանցել, զինուորական ուղղոյն
ստանալով այն զօրքերէն որոնք
պալատին մուտքը գրաւած էին ոչ
արտօնուածներն արգելելու հա-
մար, և որոնք սակայն, իւր շքեղ
կողմէն և Պօլիարի շքանշանի
փորձիկէն դատելով, վեհաժողո-
վին անգամ կարծեք են զինքը:
Այս կերպով կրցել է յանձնել նա-
հագահին ուղղեալ մի խնդրագիր
Հայկական հարցին նկատմամբ, մի
ընդարձակ հորատահարական յի-
շատակագիր և այն որոշումներ
զորս հազարաւոր հայեր քուէար-
կած են վառնայի, Պուրկազի,
Շուվլայի, Սիլվէնի, Սիլիստրէի,
Բատնէ-Մահալէի, Սիւրաբ-Չակո-
րա, Եմապօլի, Հասքօլօյի, Ստուլ-
ճայի, Պորիսովկրատի, Գարա-
պունարի, Գայաճըզի, Նովօ-Չա-
կօրայի, Քէրմէնլիի, Չիրաանի,
Ալտուսի, Հարմանլիի, Թրնովա-
Սէյմէնի, Քառնապատի և Տոպրի-
չի միջիններուն մէջ: Վեհաժողո-
վին անգամնիկ նիստէն անմիջա-
պէս յետոյ, տեսակցութիւններ ու-

նեցիր է զանազան ժողովականնե-
րու ու թղթակիցներու հետ և կը
շարունակէ ունենալ ժողովական-
ներէն մին, ներկայացուցիչ մի
հզօր պետութեան, յայտներ է ի-
րեն թէ Հայերը վեհաժողովէն
գործնական և անմիջական ար-
դիւնք չեն կարող յուսալ, այլ լաւ
ըրած են գիտումներ ընելով և
մարդ զրկելով, որով աշխարհի ու-
շը գրաւած պիտի լինին իրենց
անտանելի կացութեան վրայ: Ու-
րիշներ կարծիք յայտներ են թէ
եթէ վեհաժողովը իրաւարոհու-
թեան ծրագիր մը ընդունի, Հա-
յոց վիճակը պիտի բարւոքի հիմ-
նապէս: (*)

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

— — —

Իրաւունք իր ներկայ տարեշրջանի
հինգերորդ ամսոյն կէսն ալ բոլորեց,
միշտ ջանադիր ըլլալով իր հանդէպ
բաժանորդաց ստանձնած պարտքը լրիւ
կատարելու, բայց ցաւ է մեր յայտնել
թէ բաժանորդներէ շատերը իրենց դէ-
պի մեղ ունեցած պարտքը հատուցա-
նելու մէջ այս տարի չատ դանդաղ կը
գտնուին, որով մեզ նիւթապէս անձուկ
գրութեան մէջ ձգած են. եւ հետեւա-
բար թերթին պարունակութիւնը չա-
հեկան ընելու աշխատած ատեննիս կը
ստիպուինք մտածել նաեւ անոր օրա-
կան ծախքերուն վրայ տ. սա անտա-
նելի է խմբագրի մը համար եւ նոյն
իսկ թերթին շահեկանութեան վնաս-
ակար:

Ուստի կը խնդրենք որ մեր արգոյ
բաժանորդք փութան իրենց բաժնեգի-
ները անյապաղ զրկել խմբագրութեանս
հասցէին, իսկ Ռուսուկի, Ֆիլիպէի
Սիլիստրէի եւ Քէստանէնէի բաժանորդք
հաճին յանձնել մեր գործակալներուն,
որոնցմէ կըստանան տպեալ ընկալա-
րեր

Անոնք որ ամիսներ առաջ ընդ փոթ
վճարել խոստացած են ու ցարդ չեն
վճարած պիտի դադրին թերթ ստա-
նալէ:

(*) Մեզ խոստացուած է Լա Հէյէն
Հայկական հարցի եւ Տ. Չերազի դի-
մումներու մասին ամեն շաբթու տեղե-
կութիւններ հաղորդել: Խմբ.

ՁԱՐԸ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

Երբ անցած տարի օգոստ. 30ին
հեռագիրը Բեթերսպուրկէն սա ա-
նակնկալ լուրը բերաւ թէ Ռուս-
իոյ արտաքին գործերու նախա-
խարար կոմս Մուրավիէֆ ռուսա-
կան արքունիքին մօտ օտար պե-
տութիւնները ներկայացնող բոլոր
դեսպաններուն ծանուցագիր մը
ուղղած է, որով Նիքօլա Բ. Չա-
րին անունով ընդհանուր զինաթա-
փութիւն և խաղաղութեան Դես-
պանախորհուրդի մը գումարումը
կառավարէր, այս տեղեկութիւնը
միայն Եւրոպայի, այլ և ամբողջ
քաղաքակիրթ աշխարհին մէջ թէ-
և մինչեւ աստիճան մը յուսալիւր
խնդութեամբ ողջունուեցաւ, սա-
կայն միանգամայն մարդիկ ան-
հատուորէն իրենց զուլը երեւ-
ցուցին, հաւանական չի գտնելով
որ Չարին մեծահոգի գաղափարը
որով ան իբր խաղաղութեան ա-
ւետաբեր, ինքն իրեն յաւիտենա-
կան յիշատակարան մը կը կանգ-
նէր, կարենայ երբեք իրանալ,
Համալուրկէր Նախիլիքէն լրագի-
րը գրեց այն ատեն թէ կրնայ
այն տեսակցութիւններու վրայ
հիմնուելով զոր իր ներկայացու-
ցիչները երբեմն ունեցած էին զի-
նաթափութեան խնդրոյ մասին
գերմանացի պետական մեծ մար-
դուն Պրիմարք Իշխանի հետ, իբր
ստուգութիւն յայտարարել թէ
Գերմանիոյ վախճանած երկաթէ
վարչապետը, եթէ Չարին առա-
ջարկէն առաջ մտած չըլլար,
զայն բարի դիտումներէ բխած,
սակայն անգործադրելի պիտի նը-
կատէր: Բայց անտարակոյս այդ
պարագային մէջ, Պրիմարք իրա-
ւունք ունեցած չպիտի համարուէր
որովհետեւ այսօր, խաղաղութեան
ռուսական հրաւերէն հազիւ 8 ա-
միս ետքը, անոր շօշափելի առա-
ջին արդիւնքը կը տեսնենք ար-
դէն, այն է երկու օր առաջ Լա
Հէյի մէջ բացուած խաղաղութեան
Դեսպանախորհուրդը որուն կը
մասնակցին եւրոպական և ոչ եւ-

րոպական պետութիւններու 98
պատուիրակներ: Իրաւ, տակա-
ւին խնդիր մըն է թէ այս Գես-
պանախորհուրդը պիտի ունենայ
այն արդիւնքները որոնց կը բաղ-
ձայ իր նախաձեռնարկուն. այս
մասին ընդհանրապէս միտքերը
սկիզբիցէն ուղղութեան կը հե-
տեւին, բայց սա իրողութիւնը թէ
Գեսպանախորհուրդը կըցաւ գու-
մարուի այնքան բազմաթիւ ան-
դամներ ունենալով, ինքնին ար-
դէն ապացոյց մըն է թէ բոլոր
պետութիւնները դէպի Չարին ա-
ռաջարկը ամենամեծ շահագրգ-
ռութեամբ կը վերաբերուին և
շանագիր կերեւին խաղաղութեան
գաղափարը յաղթանակել տալու
Բոլոր պատուիրակները իրենց կա-
ռավարութիւններէն հրահանք ըս-
տացած են մեծագոյն յօժարակա-
մութիւն ցոյց տալու և ջանալու
որ Գեսպանախորհուրդը չի վեր-
ջանայ առանց ու եւ նպաստաւոր
արդիւնքի, ու այսպէս՝ պէտք է յու-
սալ թէ ամեն ինչ որ կարելի է՝ պիտի
գործադրուի Ռուսիոյ կայսրին
գաղափարներուն իրացումին ի նը-
պաստ: Թէ Չարը իր նախաձեռ-
նութեան մեծ լրջութեամբ և ար-
տակարգ շահագրգռութեամբ կը
հետեւի, այդ շատ բնական բան
մըն է: Ճիշդ և մանրամասն տե-
ղեկութիւն առնելու համար, Չա-
րը բացի պաշտօնական պատուի-
րակներէն՝ Լա Հէյ զրկեց նաեւ պե-
տութեան խորհրդական Պրիմարք
«Ապագային պատերազմը»
խորագրով մէկ գիրքը Չարին խա-
ղաղութեան առաջարկին մէկ շար-
ժառիթն եղած է: Պրիմարք պաշտօն
ունի նախ Չարին տեղեկագրել
Գեսպանախորհուրդէն ակնկալելի
արդիւնքներուն մասին, որովհե-
տեւ Չարը իր պաշտօնական պատ-
գամաւորներուն տեղեկագիրներէն
զատ, կուզէ գիտնալ նաեւ ամեն
ինչ որ սովորութիւն չէ գնել պաշ-
տօնական գրութիւններու մէջ,
մասնաւորապէս, գերակատար ան-
ձերու տրամագրութիւնները և
վարագործի ետեւ կատարուող
կարգ մը դէպքեր: Պրիմարք ունի
սակայն ուրիշ կարեւոր պաշտօն
մըն ալ. ան տեսակցելով ամեն եր-

կիրենբու պատուիրակներուն հետ պիտի ջանայ առաջ մղել՝ խաղաղութեան Դեսպանախորհուրդը մնայուն հաստատութեան մը վերածելու գաղափարը, այնպէս որ բոլոր տէրութիւններու պատուիրակները ամեն տարի գումարաւոր և քննելով ու նկատողութեան տակ ներկայ նորանոր փորձառութիւնները և արդիւնքները, խորհրդակցելով խաղաղութեան գործը յառաջացնելու միջոցներուն և եղանակներուն վրայ: Պիտի այս երրորդ և թերեւս կարեւորագոյն պաշտօնը կապացուցանէ թէ Չարլը ինչը լուծեամբ կը վերաբերի գէպի այն գործը որուն նախաձեռնարկուն եղաւ, և որքան հիմնովին մտադիր է իր գործը յառաջանելու: Պիտի իր վեհապետին փափաքին համաձայն պիտի աշխատի լաւէ-յի մէջ միջազգային յանձնաժողովին կազմութեանը համար որ ազգազգիտական, անտեսագիտական և ընկերագիտական հեղինակութիւններէ պիտի բաղկանայ և թուանշաններով պիտի ցոյց տայ այն փնտնելուն որոնք ապագայ պատերազմէ մը առաջ պիտի գան բոլոր աշխարհի ժողովուրդներուն համար: Եթէ այս առաջարկը ընդունուի թիւն չի գտնէ, կամ, բնաւ վիճաբանութեան չենթարկուի, Պիտի ամեն երկրի մէջ առանձին յանձնաժողով մը պիտի կազմէ որուն գիտուն անդամները իրենց աշխատութեան յարմար վարձատրութեան մը փոխարէն՝ պիտի որոնեն թէ ինչ պիտի ըլլան ապագայ պատերազմի մը փնտնելը տնտեսական տեսակէ:

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (10)

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՒՅ ՇԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԵ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

«Քիչ մը մտածել պէտք է Միւսաս աղա, ըսաւ քայմաքանը: — Ընդհակառակը էֆէնտիմ, ընդհակառակը: աս տեղ մտածելու բան չկայ, պատասխանեց Միւսաս ներքին մեծ ուրախութեամբ տեսնելով որ իր առաջարկի ընդունելութիւնը դժուարութեան չքաղկեցաւ թուրք պաշտօնականին կողմէն, եթէ ոչ չէ այսօր իսկ գործի կրնայք ձեռնարկել: Նիւայ նոյն իսկ երկու ժամատարմայ եւ փօղիս մը խրկելով կը ձերբակալէք զինքը, երկուսին ալ տունը կը խուզարկէք: — Ինչեք կը խօսիս Միւսաս աղա, ինչ ձերբակալել, ինչ խուզարկութիւն, ինչպէս պիտի հաստատենք անոր կառավարական շահերուն փեսական մէկը ըլլալը: — Ատոր միջոցն ալ խորհած եմ, այնքան անմիտ մի կարծէք զիս էֆէնտիմ, տունը խուզարկած ատեն, Պուտաքեանի կամ Նախնիքեանի ձեռքով պատրաստուած՝ փեսական շինծու նամակ մը խուզարկու փօղիսին ձեռքով Յովհաննէսի գոյքերուն խառնել կուտաք, տասը օրը նախնական քարցաքնութիւնները հոս կը ձգեցուին, այդ պարագային իրեն սպասնա-

տով: Չարին երկրորդ փտահելին է ծանօթ օրագրող Ռիվիոն օր չիվիոնսի հրատարակիչ Սթեմը որ այս օրեր լաւ է պիտի հասնի: Սթեմ որ անցեալ տարի Սօֆիա ալ եկաւ, քանիցս ընդունուեցաւ Չարէն որ այդ ունկնդրութեանց ժամանակ անոր հետ խօսեցաւ միմիայն խաղաղութեան Դեսպանախորհուրդին մասին:

Պուշկարիչէ
Հանդէս-Չայքոնէկ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎԱՐԻԱՆՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԵՐԱ

— Ծ Օ Ծ —

(Շարունակութիւն վեր 31 թիւէն)

Արտաշիր վարքն ու կենցաղը (422-428) նախարարաց ատելի լինելով, բողոքեցին առ Սահակ և ուղեցին մանուկ արքան մատնել պարսիկ արքունեաց: Նախընտրելով պարսիկ իշխան մը ունենալ, նախարարք առ այս իրենց օգնական և սատարող ունէին Արծկէացի Սուրմակ անուն շնորհունակ եկեղեցականն: Սահակ ընդդիմացաւ և խրատականներով ուղեց զգուշացնել նախարարները: Հասկցնելով թէ յոյն արքունեաց բարեխառը րամազրութիւններէն օգտուելով, պիտի ջանայ վերջ տալ այս ընթացքին: Այս պարագան կակնորկէ խորենացին աս տողերով «Եւ արդ պարտ է փոքր մի տանել թերութեան առնն մինչեւ զելս իրացն խորհել մարթնացուք կայսեր Երանայ թէնդոսիւ և ոչ անօրինաց մատնել ի ծաղը և ի

յայպանումն» (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԿԳ. գլուխ): Ապերասան նախարարները սակայն խուլ գրտնուեցան և ամենայն անպատկառութեամբ Սուրմակայ հետ միացած, ամբաստանեցին Արտաշիրն ու Սահակ իբր «զԵրանովք զլեալ խորհրդով» (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԿԳ. գլուխ):

Արտաշիր և Սահակ վաւայր կոչին վրայ Պարսկաստան դացին և խիստ հարցաքննութենէ մը վերջ, Արտաշիր բանտարկուեցաւ և Սահակ ինկաւ կաթողիկոսութենէն և իւրաքանչիւրին ինչքերն ալ գրաւուեցան արքունիքէն: Այսպէսով վերջացաւ Արշակունեանց հարստութիւնը, սիշա խաղաղք ըլլալով երկու ոսոխ պետութեանց, Պարսկին ու Հռովմէացոց:

Հայաստան վերջին անգամ Յունաց և Պարսից մէջ բաժնուելով, քաղաքականապէս բաժանեալ Հայոց մէջ երկու քաղաքական կուսակցութիւն առաջ եկաւ: Երեսուկանն ու Պարսկականը: Իւրաքանչիւր բաժնի կուսակիցները, կուզէին տիրող տարրի քաղաքական ազդեցութեամբ անկախ ըլլալ: Հայոց այս քաղաքական ձգտումը չէր կրնար անտեսուիլ երկու ոսոխներէն՝ Յոյնէն ու Պարսկէն: որովհետեւ իւրաքանչիւրն այս ձգտումին մէջ կը նշմարէր նպաստաւոր արդիւնքներ: Յոյնը՝ Պարսիկին դէմ պիտի ունենար հաւատակից ուժ մը: որով պիտի կարողանար ի հարկին ի վէճ գալ վայրագ պարսկին հետ: Իսկ Պարսիկը՝ տկարացած ու անճրկած Յոյնին խորագիտութեանն ընդդէմ

իր թուով ու պատուար պիտի ունենար՝ անորազուրկ հայը:

Ընդհանրապէս հայ եկեղեցականութեան զարգացեալ և վերին դասակարգը Յունական կուսակցութեան կառչած էր, նախարարներէն շատ քիչեր միայն Պարսիկ արքունեաց խոստումներէն հրապուրուած, Պարսկական կուսակցութիւնը կը նախընտրէին և ունէին նոյն իսկ Մագդեղանց կրօնը կընդունէին:

Սահակայ գահընկեցութենէն վերջ, նախարարաց մէկ մասը Սուրմակի և Բրքիշայի անբարեբաւոյ ընթացքէն ձանձրացած, կրկին Սահակայ կաթողիկոսանալը խնդրեցին: Իսկ ոմանք կաթողիկոսի ընտրութիւնը վաւայր քմահաճոյքին թողուցին: Վաւայր երկու կողմն ալ սիրաշահեցաւ և իր նպատակին հասնելու համար զՍահակ նստեցաւ իբր հոգեւոր հովիւ: Իսկ զՇուէլ քաղաքական կաթողիկոս, Սահակայ գործոց նկատմամբ, ինչպէս նաեւ հայ աւագանունն ու նախարարաց օտար և արտաքին բարբարութեանց մասին Պարսիկ արքունեաց գաղտնի լրտեսն ըլլալու պաշտօնն յանձնելով անոր:

Վաւայր Սահակայ հոգեւոր իշխանութեան պաշտօնը յանձնած ատեն, բազմակոյտ ատենին ներկայութեանը երգուընցնելով զՍահակ, խրատեց հաւատարիմ մնալ Պարսիկ արքունեաց և ապստամբութեան իրեր չը խորհիլ խաբուելով Յունաց մօլար հաւատակցութենէն (տե՛ս Խորենացի Գ. գիրք ԿԵ. գլուխ):

ցող վտանգը ցոյց տալով ես իմ առաջարկը կընեմ, դուք ալ իմ առաջարկին ոյժ կուտաք, ոյժի հետ աղատումի ալ յոյս: Կը յուսամ որ տեղի կուտայ, իսկ եթէ յամառի, այն ատեն Ռիզա էֆէնտի ձեր 200 ոսկին 200 է, պէտք է ինքեք զրկել զինքը, հոն թող Մէզրէի բանտին մէջ իր օրերը լայ այն որ Միւսասը լացնել գիտցաւ, իսկ ես հոս նորէն ձեր հզօր աշակցութեամբ ջանքերս չպիտի պակսեցնեմ մինչեւ որ Հրանդիւն կարենամ տիրանալ»:

Միւսասի պատրաստած ծրագիրը շատ որոշ եւ յստակ էր: քայմաքանը անոր գործադրութեան մէջ ունէր դժուարութիւն չը նկատելով զլուսի շարժումով մը հաճութիւնը յայտնեց:

«Քայմաքան էֆէնտի միայն կը խնդրեմ որ առանց օր կորսնցնելու գործին ձեռնարկէք, ըսաւ Միւսաս:

— Գիտնալով հանդերձ որ փութկոտութիւնը աղէկ բան չէ, քու սիրոյդ համար, աս օրէն գործի պիտի սկսիմ, վստահեցուց Ռիզա էֆէնտին, սակայն չմոռնաս ինձ խոստացած երկուհարիւր ոսկիիդ վրայ յիսուն ոսկի մըն ալ աւելցնել երկրորդական պաշտօնեաներու եւ Յովհաննէս աղաի թաղին թաղապետ Տիգրանի բերանը գոցելու համար:

— Ամենայն սիրով, պատասխանեց Միւսաս, ուզած ատենիդ յիսուն ոսկին պատրաստ է:

— Ուրեմն դուն ալ հիմակուընէ գիտցած եղիք որ գործը կարգին է, ալ

կրնաս երթալ: զգուշացիր յաճախ մօտս գալէ: Եթէ պէտք ըլլայ կարեւոր տեղեկութիւններ ես ծառայիս միջոցով «թէզքէթէ»ով քեզ կուտամ»:

Միւսաս մինչեւ դեռին խոսարհելէ ետք սենեակէն ելաւ: տունէն մեկնած ատեն բորեանի նայուածք ունէր որ որսը գտած է սակայն քանի մը զրթուարութիւններու մէջ տեղէն բարձուելու պէտք կըզգայ:

Ռիզա էֆէնտին հարիւր օսմանցին ուշադրութեամբ համբելէ եւ անոնց թուականներէ մի քանիին վրայ մասնաւոր ակնարկներ նետելէ ետք սընտուկ մը բացաւ մէջը դրաւ եւ կրկին կղպեց: Յետոյ գրասեղանին առջեւ նստաւ երկու թղթիկ առաւ: նախապէս հետեւեալ տողերը գրեց՝ զօմիսէր Ալի էֆէնտիին:

«Ալի էֆէնտի, ներկայ թղթիկս տանելուդ պէս քաղաքիս Մարգարեանց թաղը բնակող հայազգի դրամափոխներէն Յովհաննէս Նիկողոսեանի տունը գնալ երկու ոստիկանով եւ զինքը ձերբակալելով բանտարկել տուր: վաղը երբ ես գամ նախնական հարցաքննութիւնները սկսելու հրաման պիտի տամ»:

Երկրորդը նախնիքեան անուն հայու մը ուղղուած էր որը քիչ մը ետքը աւելի յայտնի գիծերով պիտի ներկայացնէք: Պարունակութիւնն հետեւեալն էր:

«Պուտաքեան էֆէնտի, իսկոյն մօտս եկուր»:

Թուական և ստորագրութիւն ա-

ւելցնելէ ետք ներս կանչեց ծագայն եւ անոր յանձնեց երկրորդ թղթիկը անմիջապէս գալի իր հասցէին հասցընելու խիստ հրահանգով: Ծագայն կերպով կէտ առկէտ գործադրեց քայմաքանին հրամանը որովհետեւ տաս վարկեան ետքը Պուտաքեան ներք մտաւ: Ատեն կորսնցնելու ժամանակ չըլլալուն քայմաքանը Պուտաքեանի ուղղուելով ըսաւ:

«Շուտ, Նիւայ աստեղ նամակ մը պիտի պատրաստես հայերէն, իբրեւ թէ մօտաւոր գիւղերէն հայ յիզափոխականներ նամակ մը գրելով դրամափոխ Յովհաննէս աղաին անկէ լրագիր կու գեն կոր եղեր: աղւոր բան մը ըլլայ, ընելիք շահերնուս քեզ ալ բաժնի կայ»:

Պուտաքեան շուտ մը նամակ մը պատրաստելով Ռիզա էֆէնտիին յանձնեց, որ յետ գրայ մը աւելցնելով Ալի էֆէնտիի գրած նամակին տակ, անոր խորհուրդ տուաւ որ՝ ներքակ հայերէն նամակը քով առնելով Յովհաննէս աղաի տունը խուզարկուած ատեն անոր տետրակներու մէջ խառնէ:

Այս գործը կարգադրելէ ետք ծագայն կանչուելով առաջին նամակը գօմիսէրին խրկուեցաւ, իսկ քայմաքան մը եւ Պուտաքեան քառորդ մը ետք տունէն դուրս եկան:

Շարունակելի

Սահակ պրնախոս և քաղաքագէտ բեմասացութեամբ Վառձայ պատասխանելով, հայոց երախտապարտ ծառայութեան փոխան Սահակն անցնող անգլիական ներկայութեան ներկայութեամբ բան մը իսկ չի պատասխանելով, լռելիայն իմացնել ուղեց թէ՛ հայք կամ ինք ինչո՞ւ այդ միջոցին չի դիմեն, երբ այնչափ ծառայութեան փոխարէն, Պարսիկներէն չարիք և նենգութիւն միայն կը գտնեն (534 յետ Բրիտանոսի) :

Նախարարաց՝ Սահակայ նկատմամբ ըրած ամբաստանութիւնը թէ՛ էր «զԹուոյնով զլեւի խորհրդով», բազմակոյտ ատենին մէջ Վառձայ զՍահակ երգունցնելը, կաթողիկոսութիւնը Սահակայ և կամ ուրիշ հայ եկեղեցանի մը չի վստահելով, Ասորի եպիսկոպոսի մը տալը . Սահակայ յունաց բաժնին մէջ երթալով, Յոյն արքունեաց և Պատրիարքարանի միջև բարեկամական յարաբերութիւններ հաստատել, Թէոփոս կայսեր հայոց նկատմամբ ցոյց տուած համակրութիւնը, Սահակայ և վարդան Սամիկնիսի տրուած մեծարանքը, Յոյն արքունեաց հաշով հայ վարժարաններու հաստատումը, Սահակ կաթողիկոսի՝ Նախարարաց ուղղած խրատականին մէջ ըրած անարկուծութիւնը, Բորբորտան աղանդաւորաց նկատմամբ Յոյն Պատրիարքարանէ հայ եկեղեցականութեան եկած հրահանգի մը համաձայն նոյն ազանդաւորաց վրայ, հայ եկեղեցականութեան և մասնաւորաբար Սահակայ հրամանաւ գործադրուած անասնական բարբարոսութիւնները որոնք հաճելի ըլլալու համար միայն եղած էին . մեզ իրաւունք կուտան կարծել ու նոյն իսկ պրն. դիւ թէ՛ Սահակ իրաւամբ կը խորհէր ազատել ազգը Պարսից լուծէն և մոցնել Յունաց լուծին տակ . և այս նոյն իսկ խոսքովու ժամանակէն . երբ հակառակ Պարսիկ արքունեաց, խոսքով զՍահակ՝ կաթողիկոս կարգեն :

Եւ մէկ հինգ տարի կաթողիկոսութիւն ընելով մեռաւ . նախաբարաց օտար եկեղեցականաց հասուցած վնասներէն ձանձրացած, Պարսիկ արքունեաց ապիւն բարեխօսել խոստանալով, միահաղոյն Սահակէն խնդրեցին, որ կրկին գահն ընդունի . սակայն Սահակ մերժեց : Վառձայ մահուանէն վերջ Յազկերտ Բ. 442-460 Սասանեաց կատարի բռնակալը գահ բազմելով . իսկ և իսկ Յունաց վրայ յարձակելով, Ատրպատականի գօրաքնդին հրամայեց, որ Հայագտան երթայ և բանակ դնէ ի Բագաւան, ուր էր Հայոյն Հայրենեաց Սահակ Սահակ Բագաւանի մէջ հիւանդանալով, Բյուզը գիւղ տարուեցաւ, ուր և մեռաւ . 51 տարի կաթողիկոսութիւն ընելէ

(388-440) և ցմահ հայութեան բարձրացման ու յառաջդիմութեան համար գործելէ վերջ, որուն համար իրաւամբ կըսէ խորհրդացին «Սահականցու ծնեալ, անմահ զիւրն հիթող յիշատակ» :

Միծին Սահակայ մարմինը փոխադրուեցաւ յԱշտիշատ Տաճար, ուր և թաղուեցաւ (տես՝ խորհրդ. Գ. գիրք Կէ զլուս) :

Արտաշէս կարապետեան (Շարունակելի)

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Սոչալա 5/17 մայիս 99

Կը խնդրենք որ հաճիք հիւրասիրել ներկայս ձեր պատուական թերթին մէջ

Քաղաքէս երեք ժամու չափ հեռու գտնուող Կուրա—Հոմոր քաղաքը ապրիլ 29/11 մայիսի օրը ամբողջապէս հրոյ ճարակ եղած է : Ուր այրուած են նաեւ հոռովաշէնաց եկեղեցին եւ հրէից աղօթատունը : Թէեւ հայոց եկեղեցին եւս բռնկած է բայց հրաշքով իմի քիչ վնասով ազատուած է : Բայց դժբաղդաբար եկեղեցւոյ կալուածները ու այն տեղ բնակող հայոց բոլորին ալ տուներն ու ամբողջ ունեցածները այրած են եւ իրենք բոլորովին մեռկ վիճակի մէջ հազիւ կրցած են կենսքերնին ազատել :

Պուրովինայի հայոցս այդ կարեւոր հատուածը իր ներկայ աննախնայեղի եւ թշուառ վիճակէն ազատելու համար, Հորաբարձութիւնս արդէն հանգանակութեան ձեռնարկած է Պուրովինայի հայոցս մէջ :

Բայց, նկատելով որ այդպիսի մեծ աղէտի մը զոհեր միւթթարել եւ անոնց վիճակը մինչեւ մէկ աստիճան բարւոքել կարենալու համար Պուրովինայի մէջ գտնուող մէկ քանի կարող ազգայնոց օգնութիւնը անբաւական է՝ Հորաբարձութիւնս կը փութայ ներկայիս կոչուած անէլ, իր հեռաբնակ ազգայնոց եւս, որպէս զի հաճին իրենց կամաւոր նուէրներով օգնութեան հասնիլ, Կուրա—Հոմորի թըռուառ ազգայնոց :

Սիրելի է մեզ յուսալ որ, Հորաբարձութեան ի հարկէ ստիպեալ արած այս կոչը արձագանգ պիտի գտնէ իր հեռաբնակ եղբարց սրտին մէջ : (°)

Ի գրեմաց Պուրովինայի Հայ եկեղեցեաց Հորաբարձութեան նախագահ Ասպետ Վարդեան Թ. Բրուկուր

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ» ԹԱՏԵՐԱԿԱՆ 6 ԱՐԱՐ

Պիտի ներկայացուցի յառաջիկայ չորեքշաբթի իրիկուն (19 մայիս) Սաւոնիկէի սրահին մէջ : Սոյն թատերական ներկայացում աննշան ծախք մը միայն պի

(°) Իրաւ ազգային եւ մարդկային պարտականութիւն է թշուառներու օգնել, բայց թող ներուրի մեզ հարցնել թէ Հայաստանի վերջին աւերումներէն ի վեր «օգնութիւն» ազգայնոց Հայաստանցիին լացն ու կոծը երբեք արձագանգ գտա՞ն Պուրովինայի ազգայնոց սրտին մէջ, եւ ասոնք ի՞նչ ըրին :

տի ունենայ և հասոյթը ամբողջովին պիտի շրջուի Պատրիարքարան որ անմիջապէս նպատակին հասցնէ :

Սովետաց մասնաւոր նպաստներ տալ փափաքողաց համար առանց որոշ գինի, այլ ըստ կամու, տոմսակներ պատրաստուած են, զորս հսկող Մասնախումբը պիտի շրջէ յարմար անձնաւորութեանց . բայց անոնցմէ զատ ուրիշներ ալ եթէ մեծկակ նպաստներ տալ ուղին թող հաճին դիմել Տեարց Տօք. փափաղանքի և Յ. Գուրպէթեանի :

Հսկող Մասնախումբ

ԼՐԱՔԱՂ

Կրօն. Ժողովը իր նախորդ նիստին մէջ նկատողութեան առած է պաշտօնէ խոյս տուող եկեղեցականներու մասին ըլլալիք անօրինութիւններու նկատմամբ Պատրիարքին առաջարկը և որոշած է խառն ժողովին ուղարկութեան յանձնել խնդիրը, վերջնական կարգադրութիւն մը ընելու համար այդ կարգի եկեղեցականներու ներկատմամբ : Ըստ մեզ, այս ծոյլ և հաստատօր եպիսկոպոսները վաճարելու մէջ գոցելէ զատ ուրիշ միջոց չէ կարելի գտնել զիրենք նեղը ձգելու համար . այդ պարագային միայն անոնք պիտի ստիպուին վանական միայնակ և անշուք կենսակէն նախամիծար համարել գաւառական կենսքը : Իսկ ընդհակառակը, անոնց որչափ թոյլ տրուի Պոլսոյ մէջ ապրիլ, այնչափ աւելի մեղք ու թուլամարտ արարածներ կը մնան և հետեւաբար ազգին վրայ աւելորդ բեռ մը կը գառնան :

—Պուրէշի ազգ. (°) վարժարանի ուսուցիչ Տ. Յ. Պիպէրճեան տեղական թերթի մը նամակ գրելով իր գոչուեցութեան մէկ նմոյշը ցոյց տալ ուզած է «այսպէս ըրինք այնպէս ըրինք 60 Քրանդ հաւաքեցինք և Ս. Չերազ պատուիրակ որոշեցինք» ըսելով :

Սակայն ոչ թէ միայն 60 այլ սովետաց համար հազարաւոր Քրանդներ հաւաքող ու տուողները Պուրէշարեանի գաւառացի ազգայիններն են, անոնք են նախաձեռնարկ եղողը, անոնք են դրամ տուողը, որոնք Պիպէրճեանի յորդորին բնաւ պէտք ունեցողներ չեն, Պ. Պիպէրճեան առաջին դէմք գործածելով այն ատեն միայն «ըրինք դրինք» ըսելու աստիճան մը իրաւունք կունենար եթէ բնիկ Պուրէշիները յորդորէր, համոզէր և քիչ մըն ալ անոնց քսակը բանալ տար : Բայց դժբաղդաբար Պ. Պիպէրճեան այդ վիճակին մէջ չէ . նա 12 տարիէ ի վեր հոն պաշտօն կը վարէ . սակայն իր պաշտօնին մարդը ըլլալէ շատ հեռի մը նայած է :

—Սօփիայէն մեզ կը գրեն . «Մի քանի անգամներ տեղույս ազգայիններէն դիմումներ եղան Թաղ. խորհուրդին, որպէս զի Հայաստանի սովետաց ի նպաստ հանգանակութեան ձեռնարկուի, բայց թաղականները խոյս տուին ըսելով «հոս որչափ հայ կայ որ ինչ ժողով» . մինչդեռ մի քանի օր վերջ եկեղեցւոյ նորոգման համար Թաղ. խորհուրդը հանգանակութիւն ըրաւ (որուն ժամանակը չէր), մօտ 1000 Քրանդ հաւաքեց : Երկրորդ անգամ Տիկիները հանգանակութիւն ըրին եկեղեցւոյ և բահանայի զգեստներուն համար : Սովետաց համար ալ խոստացան նուագահանգէս մը տալ, բայց այդ խոստումն ալ դեռ չի կատարուեցաւ :»

—Պատրիարքական փոխանորդ Սերբազանը տեղեկագիր մը յանձնած է Կրօն. ժողովին որով հարկ եղած տնօրինութիւնը կը խնդրէ Վառձայի մէջ կրկնամուտութիւն կատարող Տ. Գէորգ քահանային նկատմամբ, որ տեղւոյն Տ. Սարգիս քահանայի բացակայութենէն օգուտ քաղելով, իր ծընդաւալը ամուսնացած եւ զաւակներու տէր եղող անձ մը Վառձայի մէջ վերստին պսակած է ուրիշ կնոջ մը հետ : Փոխանորդ Սրբազանը կառավարէ խիստ պատիժ մը տնօրինել յիշեալ քահանային համար «յօրինակ այլոց» :

«ԱՐԵՆԻՆԻՔ»

—Լա Հէյի Դեսպանախորհուրդին առթիւ Ֆիլիպէի մէջ կազմուած յանձնախումբն իր հաւաքած 168 Քրանդին հաշիւը կը հաղորդէ մեզ :

Վառձայի Գանձախումբին զըրկուած	105 Ֆր.
Դեսպանախորհուրդի	»
Նախագահին հեռագրի	48.15 »
Թուղթ և պահարան	3.25 »
Բօսթի ծախք	6.60 »
Տեղւոյն Աղբատախնամին յանձնուած	5 »

168 »

—Գաղղիացի համբաւաւոր գրադարտուհի Տիկին Սէֆէրին Էքլիսի մէջ ջղուտ յօգուած մը գրելով, հայոց վերջին 4-5 տարուան ջարդերը և թրքաց բարբարոսութիւնները նկարագրած ու ազդու կոչ մը ըրած Եւրոպայի որ խաղաղութեան Դեսպանախորհուրդին մէջ հայկական խնդրոյ վերջնական լուծում մը տայ :

Սոքա թերօն ալ վառնայի մի. թիկին որոշումները հրատարակած է . այդ որոշման անփոփոմը Թաւն եւս արտատպած է :

ԿԻՐԻՏ

Էփէլտէն եղմըլ օլտըղմըլ իւրէ Բրէնս Եօրիի քէնտի մա. լէթինէ պէշ քիշի միւսթէշար (պիրի իսլամ) թային իթմիշ օլմաղլէ ատանըն իտարէ ու թէշթիւլթընա տէվամ իտէյօր : Եիմտի կիրիտին իտարէսին պէշ նէգա. ըէթէ թագսիմ իթմիշ տիր, ետ.

նի՝ տախիլի, մալի, ատի, մէարիք ու զըրաւթ վէ զապիթիյէ նէզարէթլերի. պու տախիլէրէ պիւրէր նազըր նասպ իթմիշ տիւ. զապիթիյէ նազըրը Հասան պէյ Սքիլիանաքիս իսմինտէ պիւր իսլամ տըր: Էհպիլինին իսթրահաթ ու ասալիլինին նէզարէթի կիպիէն էհէմմիլիթի մէմուրիթի պիւր իսլամա իհպլէ իթմէթլէ Բրէնա ատանըն իսլամ վէ խրիսթիյան է. հալիսինէ պիւրաֆարգ պիւր կէօղլէ պազըրաճաղընա վէ հէր իքի գալմըն մէսուտիլէթինէ պիւր իսթիսնա տըրգաթ օլընաճաղընա պիւր տէլիլի գալի կէօթէթմիշ օլըյօր: Իշթէ խրիսթիյան հիւքիւմ տարար վէ միլլէթլէր վաթանտաշ իսլամար իլէ հէր տալիմ պու հօլտա գարտաշ կիպի կէչինմէկէ արզուքէյ տիրլէր. պէօղլէ հէր պիւր մէհհէպէ վէ միլլէթէ մէզու. նիլէթ ու սէրպէստիլէթի թամմէ վէրիլէր:

Ֆիլիպէտէքի «Մուվազէնէ»ին գուլաղը չընլաւըն. իշի հօգ իսէ պազըրաճըն «Իսլամար կէօղիլիլի աշըն, խրիսթիյան էլիլի կէչէր իսէնիլ սիլի հալլան կիպի գուլաշըրլար, օնլարա էսիր օլաւընըզ...» թիւրք ճէրիտէլէրին պու կիպի թէշվիթաթըն միլլէթի իսլակիլիլի թատուպտա վէ նիմ վահշիթտէ սագլաճաղտան մատտա պիւր կէօնա ֆաիտէսի օլաճաղ. վէ իշթէ պու հօլտա թէշվիթաթըն սէմէրէսի օլարազ կիրիտ իսլամ. լարը վաթան ու միլլէթլէրին թէրք իտուպ թիւրքիյա հիճ. ըէթ իտիյօլար. պու հիճրէթին նէթիճէսի ուճ տէրէճէ սէֆալէթ տիր, վէ պուճուճ նէթիճէսի տէ հաշարաթ, աշգիլիլիք, խըրսըզըզ օլաճաղը կիպի՝ պուճուլըն սօ. նու իսէ գըրիլըն, գաթթալ, ըս. եան վէ նիհայէթ, հայտէ՝ թիւրքիտան պիւրէր ըարչա տահա էլտէն կիթմէսինէ միւնէրր օլար. իշթէ թիւրք ճէրիտէլէրին թատ. սուպանէ թէշվիթաթըն պու հօլտա սէմէրէլէր հասըլ իտէր:

Կիրիտտէ պուլընան էճնէպի ասքէրլէրտէն հալընըզ 2,000 քի. շի գալաճաղ, քէզա սէր գօման. տանլար ատալը թէրք իտէճէթլէր. եէրլի ժանտարմա թէշթիլ օլընանա տէկին տէօրթ տէվլէթ պէշէր իւզ ասքէր օրատա սագլաճաղար:

Ատանըն մալիլիսի թէշթիլ օլընան տէկին՝ միլլէթաղըր օլան ըշպէր վէ արալի սահիպլէրինէ մուպէնէթ իտէպիլմէթ իշիւն Բըրէնա տէօրթ տէվլէթտէն 800 պիլէր ֆրանք աղ ֆաիլլէ իսթիգրազ թէթլիթ իթտի. օ ագճէլէրի երնէ ալը ֆաիլլէ էհալիլէ տաղըտուպ անլէրին զրաաթ ու սանտաթլա. ընըն իճրասընա սուհուլէթ վէրէ. ճէք տիր: Տէվլէթլէր Բրէնսին պու թէթլիթի գապուլ իթտի. լէր: Իթալիա 800,000 ֆրանգա պէտէլ Կիրիտին ժանտարմա թէշ-

թիլին տէրէօհտէ իթտի վէ 90 զապիթի եօլլատը. պուճուլըն մա. աշը իթալիտտան էօտէնէճէք:

ԵՐՄԵՆԻ ՄԵՍԵԼԵՍԻ

—Պուլկարիանըն հէր շէհր ու գասապալարընտա վէ խարիճտէ էրմէնիլէր թարաֆընտան թէճէմ. միւ օլընան միթիլիլէր վէ Ամէրիգատաթի էրմէնիլէրին պաղը թէշպալիսաթը քէզա Բարիսին Ֆրանգօ-տրմէն շիթէթին էրմէ. նիթէրվէր ազալարըն սալ ու իգ. տաճաթը սալէսինտէ պու սըրա երնէ էրմէնիլիսին մէսէլէսի մէ. տէնիլիլի միլլէթլէրին տըրգա թընը ճէլպ իթմիշ տիր. մէշհուր մուէլիլիլէր վէ մուհարրիլէր կա զէթալար վէ նու թըլարլէ էֆքիտ. ըր ումուլիլիլի պիւր տախի ու յանտըրլաճտա վէ էրմէնի մէսէլէսի տէվլէթլէրին վէ պա խուսուս գօն. ֆէրանսըն նազարը տըրգաթընա իհպլէ իլլէմէթտէ տիրլէր:

Հա Հէյտէ թօրլանան էլորըալը վէ Ամէրիգալը «սօսիլիստ»լէր միթիլիլէրինտէ էրմէնիլիսին մէ. սէլէսինտէն տախի պահա իտէրէք «Էլօրըա իշիլէրին վէ Անատօլու էրմէնիլէրին մէսէլէլէրի հալլ օլըն. մատըրգա սուլհը ումուլի միւմ. քին օլաճալաճաղ, վէ պէլէր տէ գօնֆէրանս ազալարընըն Հա Հէյտէն չըգաճալարը կիւն տէշէթլի. ի գարընըզըզար եէնիտէն պաշլալաճաղ» տէմէթտէ տիրլէր:

Աթան Բէյրէրըն մուլպիլի Հա Հէյտէ Ամէրիգա մուրախաը իլէ կէօրիլէսինտէ, պու գօնֆէրանս. տան տօլալը տէմիշ տիր. «Մուհարէպէյէ սէպէպիլէթ վէրէպիլէ. ճէք մէսէլէլէրի մուլէլիլ հախօտ հաքիմ հէյլէթի (առպիլթուաթ) վա. սըլթաը իլէ հալլ իթմէք խուսու. սընտա գօնֆէրանստա նէթիճէ հուսուլա կէլէճէկինէ իննըրըմ» Տիկէր մուրախալար տախի գօն. ֆէրանստա սուլհ իշիւն էյի նէթի. ճէլէր հասըլ օլաճաղընա իսթի կէօթէրմէթտէ իթիլէր: Առպիթ. աաթ մէսէլէսինտէ մուրախալարըն էքսէրիսի էյի իսթիտտէ տիրլէր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Կէչէն բաղար կիւնիւ 23 գա. զալարտա պէլէտիլէ ինթիլապ. լարը իճրա օլընտըլար. մուլա. լիթ ֆըրգալարըն զալլէթինէ գար. չը պիւր գաղատան մատտա տի. կէրլէրինտէ հիւքիւմէթ թարաֆ. տարարը գաղանտըլար:

—Մըսըրտա հիւքիւմէթըմա օ. լան եուճուրճաղ խասթաղըն. տան տօլալը Պուլկարիա հիւքիւ. մէթի տախի հէր. գաղալարա է. միւրնամէլէր հօլլալուպ իհթիլաթ. լը տալլանըլմասը պապընտա թա. լիմաթ վէրմիշ տիր:

—Ֆիլիպէտէքի մուլպիլիլիլ. տէն ալտըրըմըզ մէթուպէ պի. նաէն, մահալին պէլէտիլէ ինթի. խասթաղտա պու բաղար կիւնիւ 4-5 ըրիլի հարէլէնմիշ վէ պիւր ա. տէմ էօլմիւշ տըր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԷ

Իսքէնտէրիտէ եուճուրճաղ խասթաղըր զուհուր իթմիշ օլ. տըրընը թէլէկրաֆնամէլէմ պիլ. տիրմիշ տիր: Մահէլին հիւքիւմէ. լիէ լաղըմ կէլէն ինթիլաթքալի լիէտպիլլէրի էլէ ալմը իսէտէ, իսմատան վէ Ալթինտան ալընան թէլէկրաֆլարա նազարէն՝ իթալ. իա վէ Երնան հիւքիւմէթլէրի իսքէնտէրիլէտէն կէլէլէր իշիւն 11 կիւն գարանթինա թախսիս իթմիշլէր:

—Ալթիլէն ինկիլիլէրա վէ Ֆըրանսա տէվլէթլէրի պէյնիտէ Աֆրիգա իշիւն միւնազա օլան մու. գալէլէլէ գարըն իրօթէսթ իթմէք իշիւն Պապը Ալթ Բարիլ վէ Լօնտրա էլիլիլէրինէ թալիլաթ վէլմիշ տիր: 1890տա մուգարրէր օլան նիթէր մուգալէլէնամէսի մուճի. պիլնէ, թըրիլիլա վիլալէթլէրին շիմալ ճիհէթինտէ Չատ կէօլիլէ գատար պուլընան արազի թիւր. քիւնըն միւլթէմէթաթը թանըլա. ճաղընտան պահա իտէրէք Պապը Ալթ մէզքիւր տէվլէթլէրին սօն մուգալէլէնամէսին նազա օլընա. սընը թալէպ իտէյօր:

—Սուլթան Սթանպուլտըր Եու. նան էլիլի Մ. Մալթօգօրտաթօ. յա Օսմանիլէ մուրասա նիշանը իհտա իթտի:

—Պօսթնտա (ամիրիգա) Տ. Մաշտոց վարդապետին վասըթա. սը իլէ էրմէնիլիսին գահէթգա. տէկիւնըն (սովիալք) իշիւն 225 տօլար (1225 ֆր.) իանէ թէճէմ. միւ օլընմըշ տըր:

—Էրմէնիլիսին գըրկընլարը էսնասընտա միլթէզարըր օլան Ա. միրիգա թապալարըն զարարա. ըրնա մուգալիլ 500,000 ֆրանք էօտէմէք իշիւն Սուլթան իրատէ իթմիշ տիր:

—Ատանալը Յովհաննէս Շահ. պաղեան Պօսթնտա զէվլէսի Րէ. հանը գալի իթմիշ տիր: Քէզա քէնտիսինէ յղափոխական սիւ. սիւ վէրմէթտէ օլան Պաղտասար. հան տախի զէվլէսինի էօլտիւր. մէկէ թէշպալիլա իթմիշ իսէտէ հաղալը էլէ վէրուպ հապս օլըն. մըշ տըր:

ԶԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա, 15 Մայիս
Պուլկար
Վալիլի, լիպրա 55-58 հէք 9, 20-10 ֆ.
Արապա, 55-60 հէքթ. 9. 50-11. 70.
Արաւ
Լիպրա 42-50 հէքթ. 6. 80-6. 90 ֆր:
Մըսըր
Վալիլի 55-57 լիպրա. 5. 80-6. 1.
Կիւնտէ 8-10 արապա վէ 10-12
Վալիլի պուլտալ վէ միսիլ 5-6 արապա
արապ կէլմէթտէ տիր:
Արապա մուլալէսի նաթօլէն 21 ֆր.
հիսապը իլէ:

ԷՄԱՆԷԹՃԻ

Մայիս իսթիտաընտան իթի. պարէն էմանէթիկիլիլէ պաշլա. յան Ալթմըշլըզ Մէմէտ աղա հէր քիմին սըբարիշի օլուր իսէ եար. մազ իւզըն թապահանտէ սաաթ. ճը իսմալիլ էֆէնտիլին տիւքիւ. նընտա պուլընմագտա տըր հէր սաաթ:

ՄԵԾ ՊԻՃԱԿԱՋԱՆՈՒԹԻՒՆ



ՍՈՍԻԱԼ ԲԱՆԱԿԻ

ՊՈԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇԽԱՆՈՐԵՍԼ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԻԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հի. տիւեալ կերպով, ներկայ տարւոյ՝ Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր.
Յունիս 7 1,500 » 135,180 »
Օգոստ. 4-5 2,000 » 241,780 »
Սեպտ. 3-4 » » 309,080 »
» 23-24 » » 363,240 »
Հոկտ. 13-31ոյ. 16,000 » 3,379,040 »

ԳՐԱՆԵՐ ԵՆ ՈՍԻԱԿ	ՄԵԾ ՊԻՃԱԿԱՋԱՆՈՒԹԻՒՆ	ՄԵԾ ՊԻՃԱԿԱՋԱՆՈՒԹԻՒՆ
Կէս	1. 25 ֆ.	14. 40 »
Քաւար	2. 50 ֆ.	28. 80 »
Քաւար	5 ֆ.	57. 60 »
Քաւար	8 ֆ.	86. 40 »
Քաւար	10 ֆ.	115. 20 »
Քաւար	16 ֆ.	184. 40 »
Քաւար	20 ֆ.	229. 60 »
Քաւար	24 ֆ.	274. 80 »
Քաւար	28 ֆ.	320. 00 »
Քաւար	32 ֆ.	365. 20 »
Քաւար	36 ֆ.	410. 40 »
Քաւար	40 ֆ.	455. 60 »
Քաւար	44 ֆ.	500. 80 »
Քաւար	48 ֆ.	546. 00 »
Քաւար	52 ֆ.	591. 20 »
Քաւար	56 ֆ.	636. 40 »
Քաւար	60 ֆ.	681. 60 »
Քաւար	64 ֆ.	726. 80 »
Քաւար	68 ֆ.	772. 00 »
Քաւար	72 ֆ.	817. 20 »
Քաւար	76 ֆ.	862. 40 »
Քաւար	80 ֆ.	907. 60 »
Քաւար	84 ֆ.	952. 80 »
Քաւար	88 ֆ.	998. 00 »
Քաւար	92 ֆ.	1043. 20 »
Քաւար	96 ֆ.	1088. 40 »
Քաւար	100 ֆ.	1133. 60 »

Գրանք եւ մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գրիլ Սոցիալական Պարտիզան Գործակալ Մուսալլա, վասն իսթիտա Մ. — Շրջակայ քաղաքներէն եկած լաւանարա. թիւնք փութով կը կատարուին:

ՆԱԾԵՅԷՔ ՄԱՄԱՆՈՒՄ ՕՐԻԵՆՏԻ ԶԵԾԱՆԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՕՐԻԵՆՏԻ Մ. ՎԵՊԷՐ Քաղաքական գործի կը ղրկուին

ВОЗЕТЕ СЕ САМО НА
ОРИЕНТЪ ВЕЛОСИПЕДИ
Фабрика за Велосипеди ОРИЕНТЪ
М.Веберъ,Руссе.

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Н. Хр. Войниковъ